ՊԱՅՄԱՆԱԳԻՐ թիվ **43**

Օբյեկտի պահպանության իրականացման և նրա տարածքում հասարակական ապահովման մասին

<< 23 >> Ապրիլ 2019թ

Ք.Սևան

ՀՀ Ոստիկանության ՊՊԳՎ <u>Սևանի պահպանության բաժանմունք</u>

Ստորաբաժանման անվանումը

Ի դեմս <u>Պ/Բ պետ, ոստիկանության մայոր՝ Արծրուն Սերյոժայի Շախկյանի</u>

Պաշտոն,անուն, հայրանուն, ազգանուն

Այսուհետ՝ <u><<Պահպանություն>> մի կողմից ՊՓԲԸ<< Գավառի բժշկական կենտրոն >></u>

Հիմնարկ-ձեռնարկության անվանումը

Ի դեմս տնօրեն ՝ <u>Աշոտ Կարապետյան</u>

Պաշտոնը, անունը, Հայրանունը ,ազգանունը

Այսուհետև <<Տնտմարմին>>մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 <<Տնտմարմինը>> հանձնում, իսկ << Պահպանությունը>> ընդունում /իրականացնում է/ <u>ք.Գավառ, Ազատության 21 հասցեում տեղակայված օբյեկտի</u>

Նշել օբյեկտի անվանումը և հասցեն

Պահպանությունը կամ հասարակական կարգի ապահովումը նրա տարածքում:

1.2 Օբյեկտի պահպանության կամ նրա տարածքում հասարակական կարգի պահպանության համար <<Պահպանությունը>> իրականացվում է ԿՊԴ–ի միջոցով ամենօրյա՝ 1/16 ժամյա՝ 18.00-ից մինչև առավոտյան ժամը 9.00-ն: հանգստյան, տոնական ու ոչ աշխատանքային օրերը՝ 24 ժամյա

1.3 Օբյեկտի պահպանության կամ նրա տարածքում հասարակական կարգի ապահիվման համար <<Տնտմարմինը>> վճարում է վարձը՝ /այսուհետ պահպանության վարձավճար/, որի գումարը ըստ սույն պայմանագիր կնքելու պահին գործող տարիֆների կկազմի ամսական <u>30000 /երեսուն/ հազար ՀՀ դրամ:</u>

Օբյեկտի նկարագիրը: Պահպանվող օբյեկտը իրենից ներկայացնում է երեք հարկանի քարե շինություն, տեղակայված է նկուղային հարկում: Մուտքի և նաղամուտքի դռները մետաղապլաստից՝ պատված չէ վանդակաճաղեռվ: Առկա է գախնի սենյակ, դուռը միափեղկ երկաթյա: Շինության լուսամուտները՝ մետաղապլաստից պատված երկաթյա վանդակաճաղերով, պատերը քարից, հատակը բետոնե, առաստաղը՝ երկաթբետոնե: Օբյեկտը կահավորված է ժամանակակից ահազանգման համակարգով, ինչը գործում է ներքին տեղակայման շարժման սենսորային ազդակներով: Օբյեկտը զինված է ներքին և արտաքին դիտարկման տեսախցիկներով:

1.4 Պահպանության վարձի վճարումները <<Տնտմարմինը>> կատարում է ամեն ամիս՝ մինչև հաջորդ ամսվա 5-ը ներառյալ: Նշված ժամկետի խախտման համար <<Տնտմարմնից>> գանձվում է ամենօրյա տույժ՝ հօգուտ <<Պահպանության>>՝ պայմանագրային ամսական գումարի 0,5 տոկոսի չափով:

ՀՀ-ում սահմանված կարգով աշխատավարձի, ինչպես նաև զինծառայողների հատուկ կոչումների, դրույքաչափերի փոփոխման դեպքում պայմանագրի կողմերը իրավասու են համատեղ քննարկել պայմանագրային գումարի չափը, որի մասին պայմանագրում կարող են կատարվել համապատասխան փոփոխություններ:

1.5 Գողության կամ այլ ոտնձգությունների հետևանքով <<Տնտմարմնի>> գույքի հափշտակմ ոչնչացման կամ վնասման /ներառյալ հրկիզման միջոցով/ դեպքում կողմերը կատարում են օբյեկ համատեղ գույքագրում, պարզվում է կողմերից մեղավորը և համատեղ հաշվարկվում է պատճառվ վնասի չափը:

1.6. Նյութական վնասի հատուցման մասին պահանջը քննարկվում է ՀՀ օրենսդրությա նախատեսված կարգով և ժամկետներում:

1.7 Սույն պայմանագրի կատարման ընթացքում կողմերի միջև ծագած վիճելի հարցերն տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ օրենքով նախատեսվ կարգով:

Պայմանագիրը՝ հավելվածով, կամ առանց դրա, կազմվում է երկու օրինակից, որից մեկը գտնվում <<Պահպանության>>, իսկ մյուսը՝ << Տնտմարմնի >> մոտ:

2. << ՏՆՏՄԱՐՄՆԻ>> ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<< Տնտմարմինը>> պարտավոր է.

2.1 Ստեղծել անհրաժեշտ պայմաններ օբյեկտի պահպանությունը կամ նրա տարածքո հասարակական կարգի ապահովումն հավուր պատշաճի կատարելու և իրականացնելու համա փակել,կնքել /կապարակնքել/ և համապատասխան կերպով օբյեկտի պահպանությունը հանձն <<Պահպանությանը>>:

2.2. Միմյանցից մեծ հեռավորության վրա տեղաբաշխված ենթաօբյեկտների պահակետերը ապահով ներքին հեռախոսային կամ այլ կապով:

2.3 <<Պահպանությանը>> 1 /մեկ/ ամիս առաջ գրավոր տեղեկացնել պայմանագիրը միակողման դադարեցնելու, ինչպես նաև օբյեկտի հիմնական վերանորոգման և վերասարքավորման դեպքու սահմանված ռեժիմի, գործունեության պրոֆիլի փոփոխման կամ այնպիսի միջոցառումնե անցկացման մասին, որոնց հետևանքով հնարավոր է օբյեկտի պահպանության բնույթի փոփոխությա կամ պահակետերի տեղաբաշխման անհրաժեշտություն, ինչպես նաև ներքին ահազանգմա համակարգի փոփոխություն:

2.4. <<Պահպանությանն>> անվճար հատկացնել ծառայական և օժանդակ շինությունների գույ կապի միջոցներ և այլ սարքավորումներ, ինչպես նաև մատուցել կոմունալ անվճար ծառայություններ:

2.5. Առողջության համար վնասակար պայմաններում ծառայություն կատարող <<Պահպանության> աշխատակիցներին ապահովել օբյեկտի աշխատակիցների համար օրենքով նախատեսված հավասա արտոնություններ:

3. <<ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ>> ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Կազմակերպել և ապահովել <<Տնտմարմնի>> կողմից իր պահպանության հանձնվա ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների հուսալի պահպանությունը հափշտակումի և վնասումից:

3.2. Ապահովել անցագրային ռեժիմի կիրառումը, եթե այդպիսիք <<Տնտմարմնի>> կողմի սահմանված են:

3.3 Ապահովել <<Տնտմարմնի>> պահպանիչ-հակահրդեհային և տագնապային ազդարարմա համակարգերի սարքերի ու սարքավորումների հուսալի և անխափան աշխատանքը: Շարքից դուր եկած սարքերի ձեռք բերումը կատարվում է <<Տնտմարմնի>>, իսկ դրանց տեղադրում շահագործումը և սպասարկումը՝ <<Պահպանության>> կողմից:

4. <<ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ>> ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 <<Պահպանությունը>> պատասխանատվություն է կրում այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ պահպանություն չիրականացնելու հետևանքով հասցվել է <<Տնտմարմնին>>՝ օբյեկտի պարիսպը, շենքերի պատերը, պահատեղերը քանդելու, դռները, լուսամուտները, ցուցափեղկերը դրանց փականներն ու կողպեքները ջարդելու միջոցով կատարված հափշտակությամբ, գույքի ոչնչացմամբ կամ հրկիզմամբ:

4.2. << Պահպանությունը>> պատասխանատվություն չի կրում

ա/ տարերային աղետների հետևանքով պատճառված նյութական վնասի համար.

բ/ բանդիտական կամ ավազակային հարձակման հետևանքով պատճառված վնասի համար.

գ/ այն նյութական արժեքների ամբողջության համար, որոնք չեն գտնվում փակ շինություններում և սահմանված կարգով պահպանության հանձնված չեն եղել:

դ/ <<Տնտմարմնին>> որևէ ճանապարհով պատճառված նյութական վնասի համար, եթե սույն պայմանագրով <<Պահպանությունը>> ստանձել է միայն հասարակական կարգի ապահովման պարտավորություն :

4.3. Նյութական վնաս պատճառելու <<Պահպանության>> մեղքի առկայության և հասցված վնասի չափը որոշվում է իրավասու մարմինների կողմից և փոխհատուցվում փաստի հիման վրա հարուցված քրեական գործի ավարտով՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

5.1. Սույն պայմանագիրը կնքված է 1 /մեկ/ տարի ժամկետով՝ 23.04.2019թ.-ին և ուժի մեջ է մտնում 01.04.2019թ-ից:

5.2 Եթե պայմանագրի ժամկետը լրանալուց երկու ամիս առաջ կողմերից ոչ մեկը չի պահանջում լուծարում, այն համարվում է շարունակելի՝ կնքված անորոշ ժամկետով և ուժի մեջ մտնում նախկին պայմաններով և ժամկետում: Պայմանագրի դադարեցման, լուծարման դեպքում <<Տնտմարմինը>> 5 օրյա ժամկետում պարտավոր է ապահովել <<Պահպանության>> վարձավճարի մարումը, ինչպես նաև պահպանության դադարեցման հետ կապված բոլոր ծախսերի վճարումը:

Այս կամ այն պատճառով օբյեկտի պահպանության մասին պայմանագրի ժամկետից շուտ լուծարումը թույլ է տրվում օրենքով նախատեսված կարգով:

6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՄԱՐՆԵՐԸ

<<ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ>>

ՀՀՈ ՊՊԳՎ ՍԵՎԱՆԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Հաշվարկային հաշիվ 900163301014

ՀՀ Կենտրոնական գանձապետարան

ՀՎՀՀ 08602118 հեռ. 0261-2-20-62

Հասցե՝ Քաղաք Սևան, Կ. Դեմիրճյան 10

ՀՀՈ ՊՊԳՎ ՍԵՎԱՆԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՐ՝

Ա.Ս.ՇԱԽԿՅԱՆ

<< 23 >> Ապրիլ 2019թ.

<<ՏՆՏՄԱՐՄԻՆ>>

ՊՓԲ-Ի ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴԵՂԱՏՈՒՆ՝

Հասցե՝ Ք. Գավառ, Ազատության 21

ՀՎՀՀ 08417304 , ՀՀ՝ 220085140329000

Բջջ.

Հեռ. 0264-2-33-53

Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

<< 23 >> Ապրիլ 2019թ.